Նոր գրքեր

"Bacterial Membranes. Ultrastructure, Bioelectrochemistry, Bioenergetics and Biophy-sics" (Editor Armen Trchounian), Research Signpost, Trivandrum, India, 2009, 287p.

"Research Signpost" (Տրիվանդրում, Հնդկաստան) պարբերականում անգլերեն լեզվով հրատարակվել է "Bacterial Membranes. Ultrastructure, Bio-electrochemistry, Bioenergetics and Biophysics" (Բակտերիալ թաղանթներ: Ուլտրակառուցվածքը, կենսաէլեկտրաքիմիան, կենսաէներգետիկան և կենսա-ֆիզիկան) վերնագրով գիրք՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Թռչունյանի խմբագրությամբ, որում ներկայացված են բակտերիաների կենսաթաղանթների հիմնախնդիր-ների վերաբերյալ գիտական ակնարկներ: Գրքի հեղինակների կազմում ընդգրկված են բակտերիաների կենսաթաղանթների հետազոտությամբ զբաղ-վող առաջատար մասնագետներ, ովքեր աշխատում են Երևանի պետական համալսարանում Ա. Թռչունյանի ղեկավարած խմբում, Հայաստանի այլ գի-տական կազմակերպություններում, ինչպես նաև առաջատար գիտնականներ ԱՄՆ-ից, ովքեր աշխատում են Վիրջինիայի համալսարանի մոլեկուլային ֆի-զիոլոգիայի և կենսաֆիզիկայի ամբիոններում: Այդ հեղինակների հետ Ա. Թռչունյանին կապում են բազմամյա համատեղ հետազոտությունները:

Գրքում լուսաբանված են բակտերիաների որոշ շտամների բջջապատի և պլազմային մեմբրանների կառուցվածքների և ախտածին պրոցեսների զար-գացման մեջ դրանց դերի որոշ տեսանկյունները, բակտերիալ թաղանթների մակերևութային լիցքը և այլ ֆիզիկական հատկություններ, պրոտոնային հա-ղորդականությունը և դրա դերը բջիջների գործառական ակտիվության մեջ, F_0F_1-ԱԵՖ-ազ ֆերմենտի կառուցվածքը և գործառնությունը, բակտերիաների նախակորիզային ակտիվության մոլեկուլային և բջջային կենսաբանությունը, կենսաֆիզիկան: Գրքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում բակտերիալ թաղանթներով կալիում իոնների տեղափոխությանը, ինչպես նաև օքսիդա-վերականգնման պոտենցիալի և մետաբոլիզմի կարգավորմանը վերաբերող հարցերը, որոնց նվիրված է պրոֆ. Ա. Թռչունյանի բազմամյա գիտական գործունեությունը: Գրքի երկու բաժինները նվիրված են տարբեր բակտե-րիաների, այդ թվում նաև ծիրանաբակտերիաների և ցիանաբակտերիաների օգնությամբ խառը խմորման արդյունքում մոլեկուլային ջրածնի արտադրու-թյանը և դրա էներգետիկային: Այս տեսակետից գիրքը արժեքավոր է հատ-կապես այն առումով, որ մասնագետներին լավ հայտնի այս կամ այն գործընթացների մեխանիզմների և մոդելների հետ միասին բերվում են և քննադատաբար քննարկվում են միանգամայն նոր տեղեկություններ: Գիրքը պարունակում է նաև բավականին դիտարժան նկարներ, որոնց մեծ մասը զունավոր են:

Գիրքը հետաքրքիր է ոչ միայն կենսաէլեկտրաքիմիական, կենսաէներ-գետիկ և կենսաֆիզիկական ոլորտի մասնագետների, այլև մանրէակենսա-բանների, կենսաքիմիկոսների, կենսատեխնոլոգների, բջջային և մոլեկուլային կենսաբանների լայն շրջանակների համար: Այն նաև օգտակար է ուսա-նողների և ասպիրանտների համար:

Վերջում ցանկանում եմ շնորհավորել գրքի հեղինակին՝ մեծ գիտական աշխատանքի կապակցությամբ, ինչն անպայման էլ ավելի կբարձրացնի Հայաստանում իրականացվող հետազոտությունների հեղինակությունը և դրանց կբերի նոր ճանաչում:

Պ.Հ. Վարդևանյան,

Երևանի պետական համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր: